

ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ

ԺԱ. — Ի ԳԵՐԵԶՄԱՆՆ ԱՍՏՈՒԱԾԸՆԿԱԼ

Թեմփիլոսի առակերտի Յովհաննու Աւետարանի :

«Լինի յետին մուրուրութիւնն յար քան զառաջինն»:

Ո՞ր բերանք եղեալ յերկինս եւ լեզուք ստայաւդ ածեալ զերկրաւ, զոր յաղագս նշմարտութեան խաւսեցաւ Քրիստոս, եւ դուք յար համարիք զառաջին եւ զյետինն՝ զործս տնաււրէնութեան Տեառն, որ ընդ անաւրէնա խաչեցէք, եւ նա անաւրինինն՝ երաց զգրախտն: Եւ դուք, թէ յարութեան հաւատացեալ էիք⁶⁵, ոչ իբրեւ զլարագործս ի դժոխս դատապարտեալ էիք⁶⁶, այլ զարքայութիւն ժառանգէիք: Զի՞մրդ էր յար, որ պայծառ լուսով արեգականն⁶⁷ աստեղըն ի միջաւրէի առաջնորդէր մոգուցն. ի Յորդանան ծեր ականջաւք լուայք զհայրական զծայնն, եւ զիզումն հոգւոյն ալաւք տեւէք, որով դաւանեցաւ Որդի Հաւր, ընութեամբ, երկոցունց⁶⁸ վկայութեամբ: Զի՞մրդ էր յար՝ կուրաց լուսաւորինն, անդամալուծից կանկնինն, դիւաց հալածինն ի մարդկանէ, բորոտիցնն) սրբինն, մեռելոց յարուցինն, որ զծովն ոտիցն ճանապարհ գործեաց, եւ զփականալ դրախտն երաց նոցին, զերկրայինքս երկնագնացս արար, ըզմիջնորմն քակեաց, եւ զարտաքսեալքս քաղաքակիցս արար հրեշտակաց:

«Պիղատոս ասէ. ունի՞ր զինուորս, զգուշացարուք որպէս գիտէք»:

Բանգի եհաս ի վերայ⁶⁹ ամենայն անիրաւութեան նոցա: Կամեցաւ զերծանել ի թակարդապատիր բանից նոցա⁷⁰, եւ զայն եւս շնորհեաց նոցա, զի մի ալոց մեղադիր լիցին⁷¹: Զի՞մրդ պահէք, որ անլափելի ծեռամբ պարսպէ զտիեզերս, եւ ընդ Հաւր եւ ընդ Հոգւոյն փառաբանի ի զուարթնոց երկնից: Ո՞ր Պիղատոս, զի՞մրդ պահի ի զաւրականաց քոց, զոր ոչ կարաց արգելուլ բարապանք դժոխոց երկաթապատ պղնձի զդամբք, զոր տեսեալ սարսեցին ըստ Յովբայ, եւ հալեցան որպէս մոմ, որ ոչ կարաց պահել զընութիւնն ի մերծնեալ հրոյն: Եւ դասք զինուորացն նստեալ պահէին, որ էին Նդոմայեցիք⁷², հրամանաւ կայսեր եկեալ արտաքս⁷³ յերուսաղէմ, վասն հրէիցն, զի մի ապստամբութիւն⁷⁴ գործեցցն, որպէս Բարքոքայն յառաջ՝ այն որ շարժեաց զվէսպիանոս⁷⁵ զաւրաւք ի վերայ Նրուսաղէմի սպանամբ⁷⁶, որպէս զրեցաւ. առ իս⁷⁷ կոչեա ի Սէիր լնռէ, որ է Նդովմայն⁷⁸ սահմանք, պահել զմահաբանս, որ է անմահ բանին Աստուծոյ կափարիլ, որ էջ մարմնով ի գերեզման, եւ արծանացոյց զմահ, որ դադարեցոյց զիշխանութիւնն նորա: Ընդ առաւաւտս առ իս դարձիք, քանզի առաւաւտուն տեսին զծագումն հրեշտակին, եւ բազումք հաւատացին ի Քրիստոս արձանալով:

«Կնքեցին զվէմն մատանեաւ քահանայիցն հանդերձ զաւրականաւքն»:

Կնիք գերեզմանին եղեւ վկայ կնքելոյ որովայնին որ կրեաց զնա, զի կնքեալ կուսութեամբ ծնաւ զանդրանիկն յամենայն տեղիս⁷⁹: Ո՞ր զարմանք, կնքէին ի վերայ գերեզմանին զվէմն, եւ հիմունք դժոխոց ի նմանէ քակէր⁸⁰, զվէմն կնքէին, եւ կա-

61 զյետինն և զառաջինն 2 2 62 անաւրինն 2 63 հաւատացիք 2 2 64 դատապարտէիք 2 2
65 Յովնի արեգականն 2 66 երկուց 2 2 67 ի վկայ 2 68 կամեալով ... գնացից նոցա 2 2
69 լիցին 2 70 Նդովմայեցիք 2 2 71 Յովնից արտաքս 2 2 72 ապստամբութիւնն 2 2
73 իսպաղանեալ 2 74 իսպաղանեալ 2 75 Նդովմայն 2 76 Նդովմայն 2 77 Նդովմայն 2 78 Նդովմայն 2 79 Նդովմայն 2 2
75 Նդովմայն 2 76 Նդովմայն 2 77 Նդովմայն 2 78 Նդովմայն 2 79 Նդովմայն 2 2

պանք ամենայն հոգւոցն լուծէր⁸⁹։ Ի վերոյ կնքէին, եւ հարք նոցա ի դժոխս ի դառն տանջանաց ազատէին⁹⁰։ Կնքեալ պահեցաւ ի գերեզմանի, այն որ կնքէ զխորս ահաւոր եւ փառաւորեալ անուամբ իւրով, եւ պահպան եւ շահապետ⁹¹ է ամենայն զեւրեզմանաց, որք հաւատով ննջեցին ի Քրիստոս։ Ոչ գաստուածային բնութիւնն ասեմք մեռեալ, եւ ոչ Աստուած անշարար⁹², որպէս Եւտիքէս, եւ ոչ մարդադաւանք⁹³ որպէս Նեստոր, այլ ի միջինն զնաստուց սուրբ հարցն դաւանութեամբ ի}։

Իրրեւ ետես սատանայ զԱստուած որ աղաղակեաց, եւ իշխանութեամբ արծակեաց զոգին⁹⁴, զլոյսն գերազանց ի մարմնի միացեալ զանվարափակն, զարհուրեցաւ եւ փախստական⁹⁵ անկաւ ի դժոխս, աղաղակեաց առ ամենայն պետս դժոխոցն եւ ասէ։ Աւգնեցէք ինձ, մանկունք կորստեան եւ սպասաւորք խաւարի, գործաւորք պղծութեան ախեցէք զդրունս իմ, զի փորը մի ոգի առից, լքաւ կարողութիւն իմ, եւ զողովմն ունի զիս, ըսնալ զողացեալ⁹⁶ խաբեաց զիս։

Ասեն պետքն. իւր գիտացեր թէ նա է յորմէ զողայարքն⁹⁷։ Ասէ սատանայ. Ժանեայ յերկինս եւ տեսի զփառս նորա, եւ այժմ ստուգիւ գիտացի որ նա է Որդին Աստուծոյ։ Ասեն զաւրքն անդնոց. վաղ ասացաք քեզ, այլ դու ընդզեալ ապստամբեցար⁹⁸ յԱստուծոյ արարչէն, տալ ընդ նմա պատերազմ, եւ յերկնից բարեացն⁹⁹ տաւրազիւ արարեր զմեզ, եւ ի սանդարամետաց զրկեցեր։ Եւ ասէ սատանայ. Ոչ գիտացի, սիրելիք մեղաց, զի մարմինն ծածկեալ էր զաստուածութիւնն. արդ զկնի իմ գայ։ Ասեն խաւարային պետքն. վայ մեզ, ուրեմն, զազգս մարդկան գայ¹⁰⁰ պահանջէ ի մէնք, զոր կորուսաք յԱդամայ մինչեւ ցայսպէս։ Բայց թէ զենովք եւ զեղիա խնդրէ, զո՞վ տամք։ Զգոյշ լերուք, զի մի գիտացեն հոգիքն. եւ ոտնահար առնեն զմեզ. զի յաւրէն՝ որ եկն այսր պառաւի որդին¹⁰¹ ի ցնծութեան են. զուցէ բան երբ առ սոսա, այլ ամրափակ արարէք։ Եւ ահա¹⁰² անթիւ զաւրք¹⁰³ հրեշտակաց յառաջ ընթացեալ¹⁰⁴ եղեն Քրիստոսի, բռնաւոր զաւրութեամբ մերժեցան¹⁰⁵ ի դրունս դժոխոց, ասեն՝ Համբարձէք իշխանք զդրունս ձեր, եւ մտցէ թագաւոր փառաց։

Յայնժամ լուան հոգիքն զծայն զնալոյ¹⁰⁶ Տեառն ընդ երեկս աւուրն ի զորուք դժոխոցն, ասեն հրեշտակքն. Ուրախացիր Ադամ եւ ցնծայ Եւայ, զի սպառեցան անէծքն, եւ ծաղկեցան արհնուութիւնքն, զի տրտմութիւնք ձեր խափանեցան¹⁰⁷, եւ խնդրութիւն տարածեցաւ, սուգ բարձաւ եւ ջուարճութիւն սփռեցաւ ի վերայ տիեզերաց, եւ մխիթարութիւն յերկնից ծագեցաւ¹⁰⁸։ Արդարք ընդկեցարուք եւ մեղաւորք խրախուծեամբ լցօրք, եւ մեռաւք կենդանասցիք. զի մահ մեռաւ եւ¹⁰⁹ Աստուած ընդ մեռալս համարեցաւ։

Լուաւ նախահայրն եւ ազատեցաւ ի դատապարտութենէ փայտին, լուաւ Եւա եւ ծայն աւետեաց մատուցանէր Ադամայ եւ հոգւոցն, ցնծացէք, ով սիրելիք, զի Աստուած բոլորից եհաս։ Լուաւ Եւայ զոտնածայն ի դժոխս, եւ աւետիս ետ Ոհամայ, եւ ասէ. Ես նախ լուայ զծայն հրապուրանաց սատանայի եւ կերայ ի պտղոյն եւ ետուրեզ, ուստի փափաքեցաք լինել իբրեւ զԱստուած, եւ ի բարձրագոյն փառացն կործանեցաք խաբմամբ բանասարկութիւն։ Արդ ես նախ լուայ թէ Աստուած մարդացաւ ի կնոջէ, եւ լուայ զոտնածայն նորա, զի եկն ազատել զմեզ։ Ես լուայ զծայն աւժին, որ եղեւ քնար սատանայի։ Ես լուայ զծայն Գարբիէլի¹⁰¹, ես լուայ զծայն դատապարտութեան յնդիւմ, եւ ես նախ լուայ զծայն ուրախութեան։

80 նոցա ի դառնութիւն տանջանաց դժոխոցն ազատէին 2: ի դառն տանջանաց 2

- 81 շահաւետ 2 82 անշարարելի 2 2 83 մահադաւանք 2 84 Զուկն քնաւոր 2 2
85 զանգի 2 86 փախստեայ 2 2 87 Զուկն գողացեալ 2 88 գողացար 2 2
89 ապստամբեցաք 2 2 90 բարեայն 2 2 91 Զուկն գայ 2 2 92 պառնակեցին 2 2
93 Զուկն բան երբեք 2 2 94 զաւրք 2 2 95 ընդ առաջ ընթացեալ 2 2
96 մերժեցան 2 2 97 գայ 2 2 98 տրտմութիւն մեր խափանեցան 2 2
99 Զուկն սուգ բարձաւ 2 2 100 զի 2 101 Զուկն Եւայ զծայն Գարբիէլի 2

Յորժամ¹⁰² լուան զայս նահապետին, եւ ուրախ եղին արդարքն, զսարճացան մարգարէն, բերկրեցան ընտրեալքն, եւ հոգիքն սասն ցԱդամ. ո՞րպէս զիտես հայր մեր: Ասէ Վադամ, մերկացաք ի փառացն ընդ երեկս աւուրն իջեալ ի դրախտն Տէրն՝ հնան զյանցաւորքս խաւուր ուրբաթու:

Արդ ի նոյն ժամու ուրբաթու. ոտնածայինի հանէ զմեզ ի ստուերաց մահու: Իբրեւ տեսին հոգիքն, որ զդրունս դժոխոցն խզեաց¹⁰³, տարակուսեցան հոգիքն: Յայնժամ հարցանեն զմարգարէսն, ո՞րպէս ասաց¹⁰⁴ հոգին վասն աւուրս այս: Ասէ Մովսէս, հուր բորբոքեցաւ ի բարկութենէ իմմէ, այրեացէ եւ իջցէ մինչեւ ի դժոխս ներքինս. եւ Դաւիթ՝ որք նստէիք ի խաւարի, լոյս ծագեցի (առ) ձեզ, եւ փշրեաց¹⁰⁵ զդրունս պղնձիս եւ զնիգս երկաթիս խորտակեաց, եւ ի խորոց անդնդոց զիմսն ի դուրս կորցեցից. եւ ել ի բարձունս, գիրեաց, եւ այլն եւս: Եւ Տէրն հպեցաւ¹⁰⁶ ի դրունս դժոխոց, եւ հալեցան դրունք պղնձիք, եւ նիգք երկաթիք խորտակեցան, եւ աստուածային լոյսն ճառագայթեաց ի ստորին վայրս անդնդաց, եւ աւերեաց¹⁰⁷ ըզրդժոխս, եւ զամենայն մթերս սատանայի արծակեաց¹⁰⁸, եւ արդալակեցին դեքն. ո՞րք ցոյցուք մթին տեղի, եւ յապահովացուք ի կրկանող ճառագայթիցս Քրիստոսի: Իսկ որք հաւատացին աւետարանական բանին Ադամայ, եւ երկիր պազին Աստուծոյն Իսրայէլի, փրկեալ նորոգեցան ի փառս, որպէս գրէ Պետրոս. Յայնժամ հոգւոցն, որ ի դժոխս, երթնալ աւետարանէր¹⁰⁹ զփրկութիւն, եւ վեր առեալ զԱդամ, ամենայն նընջեցելովքն արտաքս բերք ի դժոխոցն: Երեւեցան գնաց[ք] ըստ Աստուծո, գնացք թագաւորին մերոյ սրբոյ¹¹⁰, եւ յանցանելն յանապատ երկիր շարժեցաւ, որ անապատ արար զդժոխս ի ընակաց, եւ տիեզերք գնացին զկնի Քրիստոսի:

Եւ յորժամ էր ի խալին, եւ խոտացաւ աւազակին թէ Այսաւր ընդ իս իցես ի դրախտին: Չայս ամենայն արար Քրիստոս մինչդեռ աւազակն ի խալին յոգո՞ղ էր: Իբրեւ խորտակեցին զբարձս նորա, առ զհոգին հրեշտակն եւ բերք առ Տէրն, մինչ ոչ էր բացեալ զդրախտն¹¹¹: Իբրեւ ետես սերովքէն զՏէրն ամենայն ննջեցել(ե)ալ¹¹², ցնծութեամբ գնաց ընդ առաջ թագաւորին յաիտնից: Եւ Քրիստոս ամենայն ննջեցելովքն մտանէ ի դրախտն աւազակաւն, ըստ Տեառն խոտմանն որ ասէր. Այսաւր ընդ իս իցես ի դրախտն¹¹³: Եւ Տէր ցտերովքէն ասէ. Որ զայ եւ զնշան դրո՞ղ խալին ի նակատն, եւ հանդերձ մաքուր զգեցեալ¹¹⁴, նա մտցէ ի ներքս, եւ Տէր ընդ նոսա¹¹⁵ բաղարակցեալ մինչեւ ի սկիզբն միաշարաթուն. եւ զայլ հոգիսն, որք չէին բաւական մտանել ի դրախտն, հրաման ետ պահել հրեշտակացն մինչեւ յաւր դատաստանին, եւ զամբարնալսն ի դրախտն ամբարնալ ի վերինն Երուսաղէմ:

Բանայք որ եկեալ էին ընդ նմա ի Գալիլիա պաշտել զնա, պատրաստեցին խունկս եւ իւղս:

102 Յայնժամ 2 Ղ 103 ախտեաց 2 104 տաւաղուսեցան զարմացմամբ Եւ սկսան
հարցանել զմեծ մարգարէն Մովսէսն և առն. Թէ ո՞րպէս ասաց Ղ 105 մինչ ի դժոխսն
Դաւիթաւ հարցանեն զմարգարէն՝ Թէ զուս որպէս տեսեր: Պատասխանէ Դաւիթ և ասէ՝ Թէ ոչ
նստեալք ի խաւարի լոյս ծագեցի ձեզ՝ և Թէ փշրեաց Ղ 106 կորցեցից, և կամ Թէ ել ի
բարձունս և զերեւել զգրեւթիւնն սատանայի, և էառ աւար զնոգիւնն: Կացեալ և նստի՛ր
ժողովուրդք որ նստէիք ի խաւարի՝ տեսէք զլոյս մեծ, և որ բնականաբար էք ի խաւարի՝ լոյս
ծագեցէ առ ձեզ: 107 աւերեցին 2 108 արծակեցին 2 109 որպէս Պետրոս գրէ: Յայն-
ժամ երթնալ հոգւոցն, որ ի դժոխս, աւետարանի Ղ 110 2ուրից որոյ 2 Ղ 111 գրախտն
2 Ղ 112 ննջեցելովքն 2 Ղ 113 Ուրի ստեղծ աւազակաւն ... ի դրախտին 2 114 մտանէ
դին, հանդերձ մաքուր զգեցեալ Ղ 115 ի ներքս, ըստ Տեառն խոտմանն, որ աւազակին
առէր: Այսաւր ընդ իս իցես ի դրախտն, և Տէր ընդ նոսա 2, ի ներքս, որպէս աւազակին
առէր: Այսաւր ընդ իս իցես ի Ղ

ԲԵՐՂԵՆԷՄԻ ՄԱՆՈՒԿԸ^(*)

Բեթղենի մարզի մասին Աստուածաշունչի Մատեանին մէջ բազմաթիւ յիշատակութիւններ կան: Բազմաթիւ կարեւոր դէպքեր տեղի ունեցած են մասաւորապէս 3800 տարիներու պատմութիւն ունեցող այդ մարզին մէջ: Բենիամին՝ Յակոբ Նահապետի կրտսեր որդին՝ այնտեղ ծնաւ: Յակոբի օրած կ'ենէ՝ Ռաբէլ, այնտեղ մեծաւ ու թաղուեցաւ: Դաւիթ, Իսրայէլի ժեմադոյն թագաւորը այնտեղ ծնաւ: Մենցաւ, հովուութիւն բրաւ և Սամուէլ մարգարէի կողմէ թագաւոր օծուեցաւ:

Հաղարաւոր տարիներու ընթացքին, բազմաթիւն մանուկներ ծնած են Բեթղենի մէջ, և կարեւոր գործեր կատարելով՝ լուսաշող հեքիներ ձգելով տնցած

(*) Խորհակցեմ այս յօդուածը մեր ձեռք ունեւած ըլլալուն՝ չհրաժեշտ դնել իր կարգին:

ԽՄԲ.

են, առանց իրենց անունները զուգորդելու այս փոքրիկ մարզին: Ճիշդագոյն Մանուկը ըստած ժամանակ, նրանցից ոչ մէկի անունը կը յիշուի:

Ու հարց տանք. Ո՞ր է այդ մանուկը, որուն այս բացառիկ գիրքն ու պատիւը վերապահուած է:

Անշուշտ, ամէն ոք որ քրիստոնէական կրօնքին, Ս. Դրքին ու պատմութեան ծանօթ է, քաջ գիտէ թէ այդ բացառիկ գիրքն ու պատիւը միմիայն Մանուկ Յիսուսի վերապահուած են: Յիսուսի ու Բեթղենի մանուկները զուգորդուած են պատմութեան մէջ անքակտելի կերպով:

Յիսուսի ծնունդէն աւելի քան եօթը դարեր առաջ, Միքիա մարգարէն նախատեսեց Փրկչին ծնունդը՝ ըսելով. «Եւ դուն, ո՞ր Բեթղենի մէջ, թէև Յուդայի հաղարաւորներուն մէջը լինելով պատիկ ես, բայց քեզանից պիտի ելլէ Ան՝ որ Իսրայէլի իշխան պիտի լինի, ու նրա ելքը՝ ի հնոգ»՝ յաւիտեանական օրէնք է՝ (Ե. 2):

Բեթղենի մանկան համար Եսայի մարգարէն ալ մարգարէացաւ՝ ըսելով.

Արէն էր Հրէիցն զաւուրս երեսուն զերիտասարդ մեռեալն լալ և զինս տալ կոծողացն, որպէս Դամադիէլ ասէր, թէ զզինս կոծողացն Ստեփանոսի՝ յիմ ընիցն ետու: Ազառ յերիտասարդ հասակի ստեղծաւ, եւ ի նոյն հասակի լինի յարութիւն: Իսկ որ ամուսնէր ի խաչին՝ ոչ էր արէն նմա զայս առնել: Վասն այնորիկ կանայքն իւղս և խռնկիս պատրաստեցին, զի ամօցեն զնա փոխանակ կոծելոյ¹¹⁶. զի ոչ ծանեան թէ այս ոչ է պիտոյ նմա, մինչեւ ի գալուստն Հոգւոյն Սրբոյ ի վերնատուն: Ձի դեռ սուր երկմտութեան, զոր ասաց Սիմէոն, ունէր կոյսն, եւ այլ կանայքն և առաքեալքն¹¹⁷ ակն ունէին հատուցանել¹¹⁸ նոցա¹¹⁹ ի Գրիստոսէ, եւ թագաւորել նմա¹²⁰, որպէս Դաւիթ, եւ Եզեկիա, եւ Ուսէ¹²¹ յերուսաղէմ, վասն որոյ ասէին. Տէր եթէ աճիմ առնուս զարքայութիւնն Իսրայէլի¹²²: Եւ Տէրն զգալստեան ասին ոչ ասաց, եւ նոքա կարծէին եթէ ոչ զիտէ: Եւ Պետրոս ասէ. Գաւ լիցի քեզ ի խալ ելանել: Եւ ոչ զիտէին զգիրս եթէ ի մեռելոյ յառնէ:

«Ի շարաթուն հանդարտեցին»:

Հստ բազում աւրինադրութեան, թէ հանգեաւ Աստուած ի գործոց յիւթն արին՝ զարէնան կատարելով, թէպէտ ջերմ էին ի սպասաւորութիւն Տեառն ամենայն ուրեք ի տեսարինականսն¹²³, որում կենարարին Աստուծոյ փառք յաւիտեանս ամէն¹²⁴:

(Շար.՝ 22)

Հրատ. Ա. Յ. ՄԱՐԴՈՒՆԻ

116 Կոծայ 2 Ղ 117 Յուսի և առաքեալքն 2 118 հատուցանել 2 119 Յուսի նոցա 2 2 120 նոցա 2 Ղ 121 Ուսէ 2 Ղ 122 Յուսի Իսրայէլի 2 Ղ 123 Յուսի ի տեսարինականսն ... ամէն 2 124 ամ. ուրեք ի տեսարինականսն կենարարին, որում փառք յաւիտեանս ամէն 2

«Վասնզի մեզի մանուկ մը ծնաւ, մեզի որդի մը արուեստաւ կոյսի մը կողմէ. իշխանութիւնը նրա ուստի վրայ պիտի լինի և նրա անունը պիտի կոչուի Սքանչելի, Խորհրդակից, Հզօր Աստուած, Յաւանականութեան Հայր, Խաղաղութեան իշխան. Նրա իշխանութեան մեծնալուն ու խաղաղութեան սահման չկայ» (Թ. 6-7):

Ս. Գրքի մէջ, Յիսուսի հրաշափառ ծննդեան և երկրորդ դալուսեան մասին 351 մարգարէութիւններ կան:

• • •

Ագածի մեղանշումէն ու անկումէն ետքը, Աստուած առաւ փրկչին ծննդեան խոստումը: Նա պիտի գար կնոջ սերունդէն, որ ստատանային գլուխը պիտի ջախջախէր ու մարդուն փրկիչը պիտի լինէր: Ուրեմն, Բեթղէմի մանկան ծնունդը բաւարարէր տարբեր էր ուրիշ ծնունդներէն: Դարերէ ի վեր եղած նախատեսութիւններուն ու մարգարէութիւններուն կատարեալ լրումն էր այդ ծնունդը, իսրայէլի սպասած ու ակնկալած Մեռիան, մեղաւոր ու անյայտ կորուսած մարդկութեան փրկիչը:

Բեթղէմի մանկան ծննդեան առթիւ տեղի ունեցող դէպքերը ևս բացառիկ կարեօրութիւն մը կը ներկայացնեն: Նախ՝ Տիրոջ աւետարեր հրեշտակը կ'աւետէ Նրա ծնունդը աստուածավախ ու բարեպաշտ կոյսի մը, որը Աստուծոյ յաւանակեան ծրագրին համեմատ նախաասնականութեան էր Անոր Միանին Որդւոյն մայրը լինելու:

Սուրբ Մննդեան օրուան դէպքերը ևս նշանակալից ու խորհրդաւոր են: Գիշերուան համատարած անդորրութեան

մէջ, երբ Բեթղէմիցիներ խոր քունի մէջ էին, ժառանգ դաշտավայրին վրայ իրենց հօտերուն պահպանութիւնը ընող հովիւներ կը վայելին այցելութիւնը աւետարեր հրեշտակին, որ կ'ընէ. «Մի վախ՛նաք, որովհետեւ ես ձեզի մեծ ուրախութեան բարի աւետիս մը կու տամ, որ ըստ ժողովուրդներուն պիտի լինի, որովհետեւ ձեզի այսօր փրկիչ մը ծնաւ Դաւթի քաղաքին մէջ, որ Օծեալ Տէր է» (Ղկա. Բ. 10-11): Ասոր անմիջապէս կը յաջորդէ հրեշտակներուն երկնային համերգն ու քաղցրուր մեղեդին. «Քառք ի բորձունս Աստուծոյ և յերկիր. խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»:

• • •

Բեթղէմի մէջ ծնած մանուկը արադրիչն է տիեզերքին և տէրը բնութեան, որ մարդկային մարմին առած՝ ինքզինք իր ստեղծած մարդ էակին հետ նոյնացուցած՝ աշխարհ կ'լած էր, իր աստուածային վեհափառութիւնէն հրաժարած, մեծափառութիւնէն ընտրովին մերկացած՝ աշխարհ կ'լած է ու կ'ամովին ընտրած Բեթղէմի անշուք ժողովրդի բնիկ ծննդավայր: Իրապէս, աստուածային խորախորհուրդ, անիմանալի ու անբացատրելի ճշմարտութիւն մըն է սա, որ միշտ Թարմ է հաւատացեալներու սրտին, մօքին ու հոգիին մէջ: Վստահ դիտենք Բեթղէմի մանուկը մեր բաւարին տէրն ու փրկիչն է: Այս լույս հաւատքով ու պայծառ դիմակցութեամբ է որ կ'աւանդենք համայն քրիստոնեայ աշխարհին՝

«Քրիստոս ծնաւ և յայտնեցաւ»:

«Օրհնեալ է Սուրբ Մննդն ու Աստուածայայնութիւնը Քրիստոսին»:

ՌՈՒՐԵՆ ՎՐԴ. ՅՈՎԱԿԻՄԵԱՆ

